22. Q-017-17. Կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

• դեպքի վայրի զննության, ճանաչման ներկայացնելու, հարցաքննության և այլ քննչական գործողությունների կատարման տակտիկային վերաբերող հարցերը,

• կյանքի, առողջության, սեփականության, տնտեսական գործունեության, հասարակական անվտանգության, հասարակական կարգի ու բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկային վերաբերող հարցերը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ 900011002145 ՀՎՀՀ 02631263	<<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9 «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ Հ/Հ 16043032235600 ՀՎՎՀ 00129631
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1.4
<<17>> փետրվար 2017թ. կնքված
N << ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-17/11>> ծածկագրով գնման պայմանագրի

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քննիչների թեկնածությունների 2017թ. ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ Ունկնդիր) մասնագիտական պատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Կոմիտեի նախագահի 2017 թվականի փետրվարի 27-ի թիվ 29-Լ հրամանի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է Ունկնդիրների մոտ քննիչի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը հետևյալ ոլորտներում.

ա) Ընդհանուր մասնագիտական ոլորտ: Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում սահմանադրական իրավունքի և արդարադատության, փորձաքննությունների նշանակման և դրանց արդյունքների գնահատման, մասնագիտական էթիկայի, հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքների ընդլայնմանը, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների համարժեք ընկալման և կիրառման, իրավական վերլուծությունների կատարման, իրավաչափ վարքագծի ընտրության կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

բ) Հատուկ մասնագիտական ոլորտ: Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է քրեական իրավունքում և դատավարությունում առկա արդի հիմնահարցերին: Ուսումնական գործընթացը նպատակաուղղված է քրեական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի, քրեական իրավունքի, քրեական գործերով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի, այդ թվում՝ ապացույցների անթույլատրելիության, կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննության, մինչդատական կալանքի, խոցելի անձանց մասնակցությամբ վարույթի, և քրեական գործերով քննության ընդհանուր մեթոդաբանության վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային պրակտիկայի, կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի, ինչպես նաև մինչդատական վարույթում գույքային հարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնմանը և կարողությունների ու հմտությունների ձևավորմանը:

գ) Հարակից մասնագիտական ոլորտ: Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է հասարակագիտական հարակից ուղղվածություն ունեցող ոլորտին: Մասնագիտական պատրաստման արդյունքում Ունկնդիրները ձեռք կբերեն անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ փաստարկման և հռետորաբանության, դատական հոգեբանության և դատական հոգեբուժության հիմունքների վերաբերյալ:

1. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ լսարանային ուսուցման և փորձաշրջանի եղանակներով:

2. Ծրագիրն իրականացվում է երկու խմբով: Յուրաքանչյուր խմբի լսարանային ուսուցումն իրականացվում է ընդհանուր, հարակից և հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլների հիման վրա: Յուրաքանչյուր խմբի դասընթացների ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 250 ակադեմիական ժամ և **18 ակադեմիական ժամ** քննաշրջանի համար: Ուսումնառությունն առավելապես իրականացվում է դասավանդման ինտերակտիվ մեթոդներով:

3. Փորձաշրջանը կազմակերպվում է անհատական ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ: Փորձաշրջանի ընդհանուր տևողությունը սահմանվում է 3 ամիս: Փորձաշրջանի ավարտին յուրաքանչյուր ունկնդիր գնահատվում է՝ դրական կամ բացասական:

4. Ուսումնառության ընդհանուր տևողությունը սահմանվում է շուրջ յոթ ամիս 2 շաբաթ (1-ին խումբը՝ 2017 թվականի փետրվարի 20-ից հոկտեմբերի 6-ը, 2-րդ խումբը՝ ապրիլի 3-ից նոյեմբերի 17-ը):

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. Ընդհանուր մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	ժ/ք
1.	IC-J-002-17	ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները	10
2.	IC-J-008-17	Քննիչի մասնագիտական էթիկա	10
3.	IC-J-009-17	Փորձաքննությունների նշանակման և դրանց արդյունքների գնահատման արդի հարցերը	20
4.	IC-J-014-17	Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերը	10

2. Հարակից մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	ժ/ք
5.	IC-G-004-17	Փաստարկում և հռետորաբանություն	20
6.	IC-G-024-17	Դատական հոգեբանության և դատական հոգեբուժության հիմունքները	20

3. Հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

N	Դասիչ	Անվանում	ժ/ք
7.	IC-Q-001-17	ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով	20
8.	IC-Q-003-17	ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը	30
9.	IC-Q-043-17	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը	30
10.	IC-Q-047-17	Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում	10
11.	IC-Q-048-17	Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը	10
12.	IC-Q-049-17	Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը	10
13.	IC-Q-050-17	Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները	10
14.	IC-Q-051-17	Քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանությունը	10
15.	IC-Q-052-17	Կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցերը	20
16.	IC-C-030-17	Գույքային հարցերը քրեական դատավարության մինչդատական վարույթում	10

IV. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. IC-J-002-17. ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները

Դասընթացը պայմանավորված է սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության ոլորտում Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- սահմանադրական իրավունքի գիտության առարկան, մեթոդները, սահմանադրական իրավունքի գիտության զարգացման արդի միտումները,
- Հայաստանի Հանրապետության դատական իշխանության սահմանադրական հիմունքների (դատական իշխանության մարմինների համակարգի կազմակերպման և գործունեության կարգի) վերաբերյալ հարցերը,
- նախաքննական մարմինների սահմանադրական կարգավիճակը, այդ թվում՝ ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ դատախազության սահմանադրական կարգավիճակների վերաբերյալ հարցերը,

- սահմանադրական արդարադատության (սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակի, կազմակերպման և գործունեության կարգի, լիազորությունների) վերաբերյալ հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

2. IC-J-008-17. Քննիչի մասնագիտական էթիկա

Դասընթացը պայմանավորված է քննիչի մասնագիտական էթիկայի կանոնների հետ կապված գիտելիքները և դրանք կենսագործելու կարողությունները ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քննչական գործունեության ընթացքում և դրանից դուրս հարաբերություններում քննիչի վարքագծի կանոնների, քննիչների էթիկայի հարցերով վարույթի հետ կապված առանձնահատկությունները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ IC-J-014-17 դասընթացի հետ համատեղ:

3. IC-J-009-17. Փորձաքննությունների նշանակման և դրանց արդյունքների գնահատման արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է փորձաքննությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, համարժեք և արդյունավետ փորձաքննությունների նշանակման կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- դատական փորձաքննության տեսական-իրավական հիմնախնդիրները,
- քրեական վարույթում փորձաքննությունների նշանակման հիմքերի, կարգի, բովանդակության, կատարման և արդյունքների գնահատման վերաբերյալ հիմնահարցերը,
- փորձաքննությունների առանձին տեսակների նշանակման և կատարման առանձնահատկությունները (այդ թվում՝ դատաձգաբանական, դատաբժշկական, դատահոգեբանական, դատաքիմիական, դատաձեռագրաբանական, համակարգչատեխնիկական, ճարտարագիտատեխնիկական, տնտեսական գործունեության դեմ ուղղված առանձին տեսակի հանցագործություններով նշանակվող փորձաքննություններ):

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

4. IC-J-014-17. Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- քննչական ծառայության որպես հանրային ծառայության տեսակի հիմնախնդիրները,
- Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիոն երևույթների, դրա դեմ տարվող պայքարի հիմնահարցերը,
- հակակոռուպցիոն պայքարի իրավական կարգավորումները (ներպետական և միջազգային, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և Եվրախորհրդի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հանձնաժողովի (ՄՈՆԻՎԱԼ) հանձնարարականները),
- կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ շրջանակների (ներպետական և միջազգային, այդ թվում՝ ԳՐԵԿՈ-ի և ՄՈՆԻՎԱԼ-ի գործունեությունը), համապատասխան այլ շահագրգիռ կողմերի (հասարակական կազմակերպությունների, ՋԼՄ-երի) մասնակցության և պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ IC-J-008-17 դասընթացի հետ համատեղ:

5. IC-G-004-17. Փաստարկում և հռետորաբանություն

Դասընթացը պայմանավորված է ապացուցման, հերքման, հիմնավորման, զրուցակիցների մոտ համոզմունքի ձևավորման, տպավորիչ ելույթի ու արդյունավետ բանավեճի տեխնոլոգիաների տիրապետման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- փաստարկման գործընթացի բաղադրիչները,
- փաստարկման գործընթացի եղանակները,
- փաստարկման համակարգին ներկայացվող պահանջները,
- ավանդական և ժամանակակից հռետորիկայի զինանոցը,
- առավել հաճախ հանդիպող սխալները,
- բանավեճի ընթացքում կիրառվող կառուցողական և ապակառուցողական տեխնոլոգիաները և վերջիններիս չեզոքացման մեթոդաբանական սկզբունքները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ IC-G-024-17 դասընթացի հետ համատեղ:

6. IC-G-024-17. Դատական հոգեբանության և դատական հոգեբուժության հիմունքները

Դասընթացը պայմանավորված է դատական հոգեբանության և դատական հոգեբուժության ոլորտներում առկա խնդիրների և դրանց լուծումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- դատական հոգեբանության և դատական հոգեբուժության ոլորտներին վերաբերող փորձաքննությունների նշանակման, կատարման կարգի և արդյունքների գնահատման առանձնահատկությունները,
- առանձին սուբյեկտների վերաբերյալ նշանակվող դատահոգեբանական և դատահոգեբուժական փորձաքննությունների նշանակման առանձնահատկությունները,
- համալիր դատահոգեբանական և դատահոգեբուժական փորձաքննությունների նշանակման առանձնահատկությունները և այլն:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ IC-G-004-17 դասընթացի հետ համատեղ:

7. IC-Q-001-17. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ նոր իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով և միջազգային այլ պայմանագրերով երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդրի, անձի ազատության և անձեռնմխելիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, արդար դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքի, խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, ռասիզմի և խտրականության արգելքի) պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ IC-Q-003-17 դասընթացի հետ համատեղ:

8. IC-Q-003-17. ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումները մատուցելու, ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանգրերի կիրառման գործնական հարցերը, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում սահմանված իրավակարգավորումների էության և տրամաբանության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ՀՀ քրեական դատավարության ոլորտում նոր օրենսդրությունը,
- ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթին վերաբերող առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը,
- ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերը, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի կիրառման առանձնահատկությունները,
- քննչական գործողությունների կատարման ընթացքում ծագող գործնական հիմնահարցերը և նախաքննության ընթացքում քննիչների կողմից թույլ տրվող խախտումները,
- առանձին քննչական գործողությունների կատարման դատավարական և քրեագիտական առանձնահատկությունները,
- նախաքննության ընթացքում կայացվող որոշումների և քննչական գործողությունների արձանագրությունների կազմման առանձնահատկությունները,
- դատավարական հարկադրանքի միջոցները և դրանց ուսումնասիրությունը, ապացույցների և ապացուցման գործընթացի խնդիրները, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ապացուցման գործընթացում օգտագործելու իրավական կարգավորման հիմնախնդիրները և այլն:

Դասընթացի ընթացքում բարձրացված հարցերը կքննարկվեն նաև «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քննչական կոմիտեի ներքին իրավական ակտերի համատեքստում:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ IC-Q-001-17 դասընթացի հետ համատեղ:

9. IC-Q-043-17. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների, վիճահարույց հարցերի շուրջ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- քրեական նոր օրենսգրքի նախագծի հիմնադրույթները,
- քրեաիրավական ինստիտուտների, այդ թվում պատժողական քաղաքականության զարգացման միտումները և հեռանկարները,
- հանցավոր արարքների ճշգրիտ որակման հիմնահարցերը (մասնավորապես՝ մարդու կյանքի և առողջության, սեռական ազատության և անձեռնմխելիության, այդ թվում՝ անչափահասների դեմ ուղղված հանցագործությունների, թմրամիջոցների ապօրինի շրջանառության, սեփականության դեմ և կոռուպցիոն հանցագործությունների և այլն) և դրանց լուծման ոլորտում օրենսդրական և իրավակիրառ փորձը,
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքները, ինչպես նաև դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը):

Դասընթացի ընթացքում բարձրացված հարցերը կքննարկվեն նաև «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քննչական կոմիտեի ներքին իրավական ակտերի համատեքստում:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

10. IC-Q-047-17. Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում

Դասընթացն անհրաժեշտ է ապացույցների թույլատրելիության վերաբերյալ ՄԻԵԴ-ի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի և ներպետական դատական պրակտիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտությունները ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ապացույցների հասկացության և թույլատրելիության բովանդակության վերաբերյալ, այդ թվում՝ ապացույցների թույլատրելության ներպետական և եվրոպական չափանիշների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները և ՄԻԵԴ դիրքորոշումները,
- օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների օգտագործման մի շարք հարցերի վերաբերյալ ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումները,
- «Հանցագործության սադրանքի» հասկացության և բովանդակության վերաբերյալ՝ ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումները:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IC-Q-048-17, IC-Q-049-17, IC-Q-050-17, IC-Q-051-17 դասընթացների հետ համատեղ:

11. IC-Q-048-17. Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը

Դասընթացն անհրաժեշտ է կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննության վերաբերյալ ՄԻԵԴ-ի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի և ներպետական դատական պրակտիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտությունները ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- կյանքի իրավունքի, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի, ինչպես նաև դրանք պահպանելու ուղղությամբ պետության պոզիտիվ պարտավորության բովանդակության բացահայտումը,
- նշված բնույթի գործերով քննության առանձնահատկությունները՝ ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված չափանիշների լույսի ներքո:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IC-Q-047-17, IC-Q-049-17, IC-Q-050-17, IC-Q-051-17 դասընթացների հետ համատեղ:

12. IC-Q-049-17. Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը

Դասընթացն անհրաժեշտ է խոցելի տուժողների, վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննության առանձնահատկությունների և այդ հարցերի կապակցությամբ ՄԻԵԴ իրավական

դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտությունները ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- խոցելի խմբերի վերհանման չափանիշները,
- խոցելի անձանց մասնակցությամբ իրականացվող քննության առանձնահատկությունները,
- խոցելի անձանց նկատմամբ պաշտպանության միջոցների կիրառման առանձնահատկությունները:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IC-Q-047-17, IC-Q-048-17, IC-Q-050-17, IC-Q-051-17 դասընթացների հետ համատեղ:

13. IC-Q-050-17. Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները

Դասընթացն անհրաժեշտ է մինչդատական վարույթում կասկածյալի և մեղադրյալի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման կապակցությամբ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտությունները ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ՄԻԵԿ 5-րդ հոդվածով երաշխավորված անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի բովանդակությունը,
- անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման հիմքերը,
- անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման դեպքում կասկածյալի, մեղադրյալի կամ դատավարության այլ մասնակցի իրավունքների ապահովման եղանակները:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IC-Q-047-17, IC-Q-048-17, IC-Q-049-17, IC-Q-051-17 դասընթացների հետ համատեղ:

14. IC-Q-051-17. Քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանությունը

Դասընթացն անհրաժեշտ է քրեական գործերի քննության մեթոդաբանության առանձին հարցերի կապակցությամբ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանց կիրառման հմտությունները ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- ՄԻԵԿ հիմնարար սկզբունքները, որոնք ազդում են քրեական գործով քննության մեթոդաբանության վրա,
- քննության վարույթի մասնակիցների մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի բովանդակությունը,
- քննության ընթացքում կասկածյալի և մեղադրյալի արդար դատաքննության, անձնական ազատության իրավունքների ապահովման եղանակները և այլն:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ IC-Q-047-17, IC-Q-048-17, IC-Q-049-17, IC-Q-050-17 դասընթացների հետ համատեղ:

15. IC-Q-052-17. Կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցերը

Դասընթացը պայմանավորված է կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- քննչական գործողությունների տեսակները և տակտիկական հնարքները: Մասնավորապես՝ դեպքի վայրի զննության, ճանաչման ներկայացման, խուզարկության, ձերբակալման, մեղադրյալի հարցաքննության՝ ըստ հարցաքննվողի կարգավիճակի (օրինակ՝ անչափահաս վկա) հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները) և այլ քննչական գործողությունների կատարման տակտիկային վերաբերող հարցերը,
- կյանքի, առողջության, սեփականության, տնտեսական գործունեության, հասարակական անվտանգության, հասարակական կարգի ու բնակչության առողջության դեմ ուղղված առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդիկային վերաբերող հարցերը:

Դասընթացի ընթացքում բարձրացված հարցերը կքննարկվեն նաև «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քննչական կոմիտեի ներքին իրավական ակտերի համատեքստում:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով:

16. IC-C-030-17. Գույքային հարցերը քրեական դատավարության մինչդատական վարույթում

Դասընթացը պայմանավորված է քաղաքացիական իրավունքի առանձին ինստիտուտների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- սեփականության իրավունքի ոլորտում առկա և քննիչի մասնագիտական գործունեությանը վերաբերելի հիմնահարցերը (այդ թվում՝ պետության և համայնքների սեփականություն հանդիսացող սեփականության իրավունքի հետ կապված հիմնահարցերը, սեփականության իրավունքի պաշտպանության, ինչպես նաև սեփականության իրավունքի ծագման, իրացման և դադարման հետ կապված այլ հարցեր),
- պարտավորական իրավունքի ոլորտում առկա և քննիչի մասնագիտական գործունեությանը վերաբերելի հիմնահարցերը (այդ թվում՝ պայմանագրային և արտապայմանագրային (դելիկտային) պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հետ կապված իրավահարաբերությունները),
- ձեռնարկատիրական իրավունքի ոլորտում առկա և քննիչի մասնագիտական գործունեությանը վերաբերելի հիմնահարցերը (ձեռնարկատիրական գործունեության բնույթը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և կարգը),
- քաղաքացիական իրավունքի և քննիչի մասնագիտական գործունեությանը վերաբերելի արդի այլ հիմնահարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, Հ/Հ 900011002145 ՀՎՀՀ 02631263	<<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9 «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ Հ/Հ 16043032235600 ՀՎՎՀ 00129631
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1.5
<<27>> փետրվար 2017թ. կնքված
N << ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-17/11>> ծածկագրով գնման պայմանագրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔՆՆԻՉՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քննիչների հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է Կոմիտեի նախագահի 2017 թվականի փետրվարի 27-ի թիվ 29-Լ հրամանի հիման վրա:
3. Ծրագիրը նպատակաուղղված է քննչների մոտ հրազենի գործադրման հմտությունների ձևավորմանը և դրանց շարունակական կատարելագործմանը:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:
5. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 10 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ օր ժամկետով:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (ԴԱՍԸՆԹԱՑԸ) ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	I-S-001-17	Հրազենի գործադման հմտություններ	10

1. I-S-001-17. Հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է քննիչների մոտ հրազենի գործադրման հմտություններ ձևավորելու և դրանք կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հրազեն գործադրելու, պահելու, տեղափոխելու անվտանգության կանոնները, հրազենային վնասվածքներ ստացած անձանց առաջին բժշկական օգնության հիմունքները, ինչպես նաև հրազենի կիրառման գործնական պարապմունքներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011002145
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Արդարադատության ակադեմիա>>
ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043032235600
ՀՎՎՀ 00129631

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
<<27>> փետրվար 2017թ. կնքված
N << ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-17/11>> *ծածկագրով գնման պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում									
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	Ընդամենը տարվա
1.	Վերապատրաստման, մասնագիտական պատրաստման և հատուկ ուսուցման ծառայություններ	10304600	10304600	10304600	20609100	20609100	20609100	30263023	30263023	30263023	**30263023**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011002145
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043032235600
ՀՎՎՀ 00129631

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2.1
<<27>> փետրվար 2017թ. կնքված
N << ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-17/11>> ծածկագրով գնման պայմանագրի

ՀԱՇՎԱՐԿ

Անվանում	թվաքանակը	խմբերի թիվը	մեկ խմբին ընկնող ժամերի թիվը	Օրերի թիվը	ժամերի թիվը	ժամավարձ	Գրենական և այլն 1 հոգու հաշ. 8=4:2ժx133դ	մասնագիտական վերապատրաստման վերնագրերից	Մուտք	Ճանապարհածախս	Վճարական տեղ/հիմնարկ	Ընդհանուր ժամավարձ 13=6x7	Գրենական և այլն ընդամենը 14=2x8	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Պետական ծառայողներ	62	3	32	4	96	5000	2128	17	204000	85000	31000	480000	131936	931936
Քննիչներ	330	15	30	4	450	5000	1995	155	1860000	775000	165000	2250000	658350	5708350
Քննիչների լրացուցիչ վերապատրաստում	42	2	50	6	100	5000	3325	29	522000	145000	21000	500000	139650	1327650
Թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ուսուցում	50	2	250		500	5000	16625				100000	2500000	831250	3431250

Հատուկ ուսուցում

Անվանում	թվաքանակը	խմբերի թիվը	մեկ խմբին ընկնող ժամերի թիվը	Օրերի թիվը	Հատուկ ուսուցման արժեքը	ՈՒղևորափոխադրման արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8
Քննիչների հատուկ ուսուցում	646	15	10	1	12920000	900000	13820000

Ընդամենը	25219186
ԱԱՀ	5043837
Ամբողջը	30263023

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<< քննչական կոմիտե
<<, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
<< ՖՆ գաշխատանքների գործառնական վարչություն,
Հ/Հ 90001002145
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան, Փիրումյանների 9
«ԿՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, Մաշտոց մ/ճ
Հ/Հ 16043032235600
ՀՎՀՀ 00129631

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
<< 27 >> փետրվար 2017թ. կնքված
N << ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-17/11>> ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<< 24 >> փետրվար 2017թ. կնքված
N << ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-17/11>> ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. -------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4
<<27 >> փետրվար 2017թ. կնքված
N << ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-17/11>> ծածկագրով գնման պայմանագրի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՌԵԿՏՈՐ _____-ԻՆ

ԴԻՄՈՒՄ

Հարգելի _____,

Ես _____
Անուն, ազգանուն

_____
պաշտոնը

_____
մշտական բնակության վայրի հասցեն

ս.թ _____<<_____>>-ից մինչև _____ <<---->>-ն ընկած ժամանակահատվածում մասնակցելու եմ վերապատրաստման դասընթացներին: Վերապատրաստման վայր եմ ներկայացել _____<<_____>>-ին և պատրաստվում եմ մեկնել _____<<_____>>-ին:

Խնդրում եմ՝

- ▫ ապահովել կացարանով,
- ▫ ինչպես նաև սահմանված կարգով և չափով փոխհատուցել տրանսպորտային ծախսերը
- ▫ և սննդի հետ կապված ծախսերը:

Խնդրում եմ փոխհատուցման գումարը վճարել

- ▫ կանխիկ ձևով
- ▫ անկանխիկ ձևով՝ _____ հաշվեհամարին:

ԴԻՄՈՂ՝

<<_____>> _____201 թ.>>: